ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2026 թվականի թիվ 145 - Ա

ԱՐԹՈՒՐ ՄՈՒՇԵՂԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 99-30.2-Ղ4-1) ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 122-րդ, 130-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2026 թվականի մայիսի 6-ի թիվ 138-Ա հրամանով ստեղծված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի (ծածկագիր՝ 99-30.2-Ղ4-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 7-ի եզրակացությունը և Արթուր Ղազարյանի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ.

1. Արթուր Մուշեղի Ղազարյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի (ծածկագիր՝ 99-30.2-Ղ4-1) պաշտոնին: Աշխատանքը սկսել 2026 թվականի մայիսի 12-ին:
2. Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ–գլխավոր հաշվապահին՝ կատարել հրամանից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործառույթները:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Արթուր Ղազարյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

2026-05-11 12:20:40 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026 թ. մայիսի 11
ք.Եղեգնաձոր